*առ Ուլահ, և յղեալ նամակ առ Նետողաց ազգն՝ եթէ
գնասցեն ընդ նորա, և թէ հնազանդքին ոչ՝ ի սուր քար-
չեսցեն զնոսա, քանզի բազում ժամանակս յինքեանց
գնէին պարոնս և ոչ ընդ ձեռամբ Թուրքաց. և այժմ
զայս արար վէզիրն։*

*Կիրակի (24 Յունուար). ի փուռս Վարդանին գնա-
ցաք ընդ Մղտեսին աւրհնել՝ ԻԴ-ի։*

*Գշի (26 Յունուար). ձիւն եկաւ։ Լուսինն նոր,
Ծաւմազին էվէլ ԻԶ-իս։*

*Կիրակի (31 Յունուար). Բարեկենդան Սուրբ Սար-
գըսի։*

*Բշի (1 Փետր.). Գաբրիէլ աղբար մեռաւ. որ եւ
Փետրուար ասի։*

Գշի (2 Փետր.). Շահամիրն եկն յԷտրէնու։

Ուրբաթ (5 Փետր.). տաճիկ[1]) *գող մի կախեցին
ի Պարմաղափուն։*

*Սուրբ Սարգիս. օրս (6 Փետր.) ի փուռն գնացաք
ընդ Մղտեսուն։ Երեկոյին ընդ Տէրտէրին ի փուռ Խա-
նումին գնացաք։ Աւուրքս զհոռմի պատրիգն առեալ
տարան յԷտրէնէ։*

*Կիրակի օրս (7 Փետր.) Եղիան և Եարտում եղ-
բարքն բազումս զանեցին զԹըլթըլն և զՊարմախսուզն
վասն չար հպարտութեան իւրեանց. և յորժամ այս
եղև՝ զՏէր Խաչատուրն ըմբռնեալ եթէ Որքան ղու-
րամա կայ տալ պիտիս, և բազում անասելի բանս
ասացին Թըլթըլն և Պարմախսուզն Տէր Խաչատուրին,
և առին զդրամն և երեկոյին եկեալ ի մի վայր ձայ-
նեցին զնա և զփիլոնն ուզեցին ի նմանէ և նա ճար
ոչ գտեալ, ասացեալ թէ Ո՛չ յեկեղեցիս ձեր գամ և
ո՛չ ձեզ փիլոն տամ. այսու խօսիւք պրծեալ գնաց։*

1) *տաճի.*